Հավելված
Առինջ համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 8-ի
N 69-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

գ. Առինջ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....2.
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....4
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 20
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ..... 29
5. ՀԶԾ -Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ..... 31
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....33

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի 2017-2021թթ. Զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ -ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ -ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Առինջ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ -ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ -ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ -ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Առինջ համայնքի ավագանու 2016թվականի հունիսի 17-ի N 38-Ա որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Առինջ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ -ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Առինջ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ

դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ : ՀԶԾ -ն ներառում է նաև Առինջ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Առինջ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Առինջի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ -ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առինջ համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, սահմանակից է Երևան քաղաքի երեք թաղային համայնքներին և մարզի երեք գյուղերի վարչական տարածքներին: Գտնվում է ՀՀ սահմանից 65կմ, մարզկենտրոնից՝ 45 կմ, մայրաքաղաք Երևանից 3 կմ հեռավորության վրա: Այստեղով է անցնում Երևան-Սևան մայրուղին:
Մակերեսը կազմում է 8.45կմ^2, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1150մ: Գյուղի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարեխառն, տարեկան տեղումների քանակը 250-ից 350մմ-ի սահմաններում է, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն և կարկտահարություն: Գտնվում է 7-8 բալանոց սեյսմիկ գոտում:

Վաղբրոնզեդարյան հնագիտական գտածոների գոյությունը վկայում է, որ բնակավայրը հիմնադրվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Գյուղը պատմական աղբյուրներում հիշատակվում է 5-րդ դարից սկսած: Հին ու միջին դարերում տարածքը եղել է Մեծ Հայքի Այրարատ Նահանգի Կոտայքի գավառում՝ արքունի սեփականություն:

Գյուղի մոտ, Թիկնաց բլրի վրա, պահպանվել են հին բերդի մնացորդներ: Բերդապարսպի ստորին շարքերը մեծ մասամբ անտաշ քարերով են, մուտքի մասում՝ կոփածո սրբատաշ: Պարսպի քարերից մեկի վրա քանդակված է թևատարած արծիվ, կողքին՝ հեղինակի հիշատակությունը՝ Հովհաննես եպիսկոպոս նկարող, 1501թ.: Մուտքի բարավորի վրա քանդակված են իրար փաթաթված երկու վիշապ (1501թ.-ին ձևավորել է Մանվել քարգործը): Բերդի ներսում կան եկեղեցի և տների ավերակներ: 2000թ. բերդի մոտակայքում կառուցվել է Ս.Աստվածածին եկեղեցին:

Առինջ գյուղում, բլրի լանջին է գտնվում Ձագավանքը կամ Գետարգելի Ս. Նշան վանքը, որը հիմնադրվել է վաղ միջնադարում: Վանքի հնագույն եկեղեցին VII դ. եռախորան, փոքր խաչաձև գմբեթավոր կառույցներից է: Պահպանվել են սրբատաշ տուֆից շինված պատերի ստորին շարքերը: Եկեղեցուն հյուսիսից և հարավից կից են նրա հետ միաժամանակ կառուցված և ընդհանուր գետնախարիսխ ունեցող մատուռներ: 855-ին Ձագավանքի սարկավագ Զաքարիան ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս (Զաքարիա Ա Ձագեցի): Ձագավանքում 1270-ին գումարվել է Ձագավանի եկեղեցական ժողովը: Վանքը նշանավոր կրոնական կենտրոն և հայտնի ուխտատեղի է դարձել, երբ 1293-ին Գրիգոր Է Անավարզեցին վանքին նվիրել է Գետարգելի ս. Նշանը՝ Հռոմի Սեղբեստրոս պատրիարքի՝ ս. Գրիգոր Լուսավորչին տված Քրիստոսի խաչափայտի մասունքը, որով, ըստ ավանդության, Պետրոս

Ա Գետադարձը 1022-ին, Բյուզանդիայի կայսր Վասիլ II–ի ներկայությամբ, Տրապիզոնում Ջրօրհնեքի տոնին քաղաքի միջով անցնող գետը կանգնեցրել է (այստեղից էլ՝ Գետադարձ և Գետարգել անունները): Ձագավանքում 1293-ին, ս. Նշանը պահելու համար, կառուցել են երկհարկանի գմբեթավոր եկեղեցի, որը վերականգնվել և վերանորոգվել է վերջին տարիներին: XIVդ. Սկզբին վանքում գործել է Թադևոս Բոկիկ Ձորավանեցի վարդապետը:

XV դ. Գեղարդավանքից Ձագավանք է տեղափոխվել Սիմեոն Ռաբունապետը, որը բարեկարգել է վանքը: 1425-ին վանքում Ստեփանոս գրիչն ընդօրինակել է Հակոբ Ղրիմեցու 'Մեկնություն տոմարի' երկը, ապա՝ Սարգիս Ձագավանեցի վարդապետի (1441-ին մասնակցել է Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատելու արարողությանը) վանահայրության ժամանակ՝ "Քերականություն և բառգիրք"-ը:

Ձագավանքն ավերվել է 1679-ի երկրաշարժից, մնալով, սակայն, մինչև XX դ.՝ որպես գործող վանք, ունենալով բազմաթիվ կալվածքներ, ջրաղացներ, Երևանում՝ այգիներ:

Գետարգելի ս. Նշանը (ոսկե խաչը) այժմ գտնվում է Էջմիածնում, և մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսը առաջինը նրանով է օրհնում ս.Մյուռոնը: Գետարգելի ս. Նշանի տոնը կատարվում է գարնանը՝ ս. Զատկի հաջորդ կիրակին:

Հայ առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի մեջ է մտնում Առինջ գյուղի Սբ.Հովհաննես եկեղեցին (V դար), որը նախկինում կոչվել է Սբ.Ստեփանոսի անունով, վերանորոգվել է 1281 թ-ին, երկրորդ անգամ վերակառուցվել է գյուղի հասարակայնության հավատարմատարների և Երևանի բնակիչ Մելքոն Դավիդովի միջև 1879թ-ին կնքված պայմանագրի հիման վրա: Այս մասին կա արձանագրություն նաև եկեղեցու արևմտյան շքամուտքին. "սույն տաճար շինեցաւ արդեամբք գիւղի հասարակության յամի 1880: Գրեց Մարտիրոս Տեր Աբրահամեան":

Առինջ գյուղի հին գերեզմանոցում գտնվում է քանդակազարդ խաչքարերի դաշտ (սկսած XII դարից), որն իր կարևորությամբ և նշանակությամբ երկրորդն է Նորատուսի հուշարձաններից հետո:

Առինջ համայնքի վարչական տարածքը կազմում է 1042,39 հա., որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 74,85 հա.-ը, բնակավայրերը զբաղեցնում են 820,74 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 70,71 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 16,54 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 55,93 հա, ջրային հողերը՝ 3,62 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 49,30 հա:

Առինջ համայնքի բնակչությունը 2016 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 6266 մարդ (աղյուսակ1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	**6266**
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	**1588**
2.1	Այդ թվում՝ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	**50**
2.2	Կիսակառույց տներում բնակվող	**36**
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	**81**

Համայնքի բնակչության 48,1% կազմում են տղամարդիկ և 51,9% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	6266	3256	3010
	մինչև 1 տարեկան	110	56	54
	1-2 տարեկան	163	92	71
	3-4 տարեկան	206	107	99
	5-6 տարեկան	188	98	90
	7-10 տարեկան	432	230	202
	11-14 տարեկան	305	165	140
	15-17 տարեկան	149	77	72
	18 և ավելի տարեկան	4713	2421	2292
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	657	350	307
	Տարիքային և աշխատանքային	250	150	100
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	11	6	5

4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	1		1
5.	Հաշմանդամ երեխաներ	22	12	10
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-		
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	3		3
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	16		16
9.	Հաշմանդամներ	155	80	75
10.	Զբաղվածներ	2201	1051	1150
11.	Գործազուրկներ	1180	750	430
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	81		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	7		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Առինջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 48-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 147660,9 հազար դրամ, ծախսերի գծով՝ 216160,9 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 68500,0 հազար դրամ: Առինջ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 14-ի թիվ 04-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է 147660,9 հազար դրամ, ծախսերի գծով՝ 222212,5 հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ 74551,6 հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 51,8%՝ 76470,0 հազար դրամ: Համայնքի տարածքում գործում են 23 առևտրի և 8 հասարակական սննդի օբյեկտներ, կենցաղ սպասարկման թվով 3 ծառայություններ, գրանցված են արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ, անհատ ձեռներեցներ: Այդպիսի ձեռնարկություններից են «Մուլտի Ագրո» , «Լեստ » և «Առինջ» ՍՊԸ- ները, ինչպես նաև «Լադա », «Հյունդայի » և «Եվրոմոթորս» առևտրի սրահները: Համայնքի տարածքում է գտնվում նաև «Առինջ Մոլ » տոնավաճառը, մեղվաբուծական փորձակայանը և այլ արտադրական կազմակերպություններ, որոնց արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Համայնքում զարգանում են առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը: Բնակչության հիմնական

զբաղմունքը արտադրությունը, մատուցվող ծառայություններն ու առևտուրն է: Ակտիվ ձեռնարկություններն են՝

- ✓ <<Մուլտի Ագրո>> ՍՊԸ-ն ՝ զբաղվում է անասնապահությամբ և գյուղմթերքների արտադրությամբ,
- ✓ << Մեղվաբուծական փորձակայան>>՝ զբաղվում է մեղվապահությամբ և մեղրի արտադրությամբ,
- ✓ << Լիդի հացատուն>>՝ զբաղվում է հացի և թարմ այլուրե հրուշակեղենների արտադրությամբ,
- ✓ <<Լեստ>> ՍՊԸ-ն ՝ զբաղվում է հացի և լավաշի արտադրությամբ:

Համայնքը հարուստ է պատմամշակութային կոթողներով, խաչքարերով և եկեղեցիներով: Առինջ համայնքում գործում է Սուրբ Հովհաննես , Զագավանք և Մայրամ Աստվածածին եկեղեցիները: Համայնքում է գտնվում վարպետ Լևոնի հրաշք քարանձավը, որը խթան կհանդիսանա համայնքի զբոսաշրջության զարգացմանը:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ հանրակրթական դպրոց՝

- ✓ «Առինջի Կոյլա Ծառուկյանի» անվան միջնակարգ դպրոց:

Դպրոցը ունի երեք մասնաշենք և վերանորոգման խիստ կարիք:

Համայնքն ունի մեկ նախադպրոցական հաստատություն՝ « Ռոզա Ծառուկյանի» անվան մանկապարտեզ, որը հին կառույց էր և նախատեսված էր 50-60 երեխաների համար: 2016թվականի փետրվար ամսից ժամանակավորապես դադարեցվել է գյուղի մանկապարտեզի գործունեությունը՝ նոր տիպային մանկապարտեզ կառուցելու նպատակով: Մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են և ավարտին կհացվի մինչև 2017թվականի սեպտեմբեր ամսին և նախատեսված է մինչև 200-250 երեխաների համար:
Համայնքում գործում է մեկ մշակույթի կենտրոն: Մշակույթի կենտրոնում գործում են մի շարք խմբակներ՝ <<Վերածնունդ>> պարային համույթը, կարատեի, բռնցքամարտի: Գործում են դաշնամուրի և երաժշտական այլ գործիքների խմբակներ, նկարչության, մակրամեի խմբակներ: Նշված խմբակներում ընդգրկված են շուրջ 350 երեխաներ: Մշակույթի կենտրոնը վերանորոգված է, ապահովված է ժամանակակից գույքով և ջեռուցման համակարգով: Մշակույթի կենտրոնում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հիշատակի և տոն օրերին: Մշակույթի կենտրոնի 2-րդ հարկում է գտնվում գրադարանը, որտեղ առկա է 10 955 կտոր գիրք: Գրադարանում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ գրքի քննարկումներ, գրքային ցուցահանդեսներ, հանդիպման երեկոներ:

Աղյուսակ 3-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 3. Առինջ համայնքի հանրակրթական դպրոցի, մշակույթի կենտրոնի վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Առինջի Կոլյա Ծառուկյանի» անվան միջնակարգ դպրոց	**70**	**577**
2.	Մշակույթի կենտրոն	**12**	**350**

Համայնքում գործում է մեկ բժշկական ամբուլատորիա՝

- ✓ Առինջի «Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն / ՀՈԱԿ /

Բժշկական ամբուլատորիայի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման համակարգով, սակայն ունի մասնակի վերանորոգման կարիք: Հիմնովին փոխվել է բժշկական ամբուլատորիայի լաբորատորիայի հատակը, ձեռք է բերվել նոր լաբորատոր սարքավորումներ: Բարելավվել է ազգաբնակչության բուժսպասարկման վիճակը, պարբերաբար դրամաշնորհ է հատկացվում բժշկական ամբուլատորիային՝ անվճար դեղորայքի ձեռքբերման նպատակով՝ գյուղի հաշմանդամ, կարիքավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրամադրելու նպատակով:
Համայնքում աղբահանությունը իրականացնում է «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը / ՀՈԱԿ/:
Կազմակերպությունը զբաղվում է գյուղի շրջակա միջավայրի պահպանման և աղբահանության հարցերով, ապահովում է փողոցների, հրապարակների և այլ տարածքների շուրջօրյա աղբահանությունը, սանիտարական մաքրման աշխատանքները, ինչպես նաև հուշարձանների, պատմամշակութային արժեքների տարածքների պահպանումը և բարեկարգումը:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

2016թվականի փետրվար ամսից մասնավոր ներդրումների հաշվին սկսվել և շարունակվում են գյուղի նոր տիպային մանկապարտեզի շինարարական աշխատանքները:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- *Համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*
- *Ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):*

Ֆինանսական կանխատեսումները պետք է արվեն 5 տարվա կտրվածքով և համեմատվեն ելակետային տարվա հետ (ՀԶԾ կազմման տարվան նախորդող տարվա փաստացի և տվյալ տարվա կանխատեսվող արժեքներ): Հստակ պետք է բացահայտել, թե ինչի հիման վրա են արվել կանխատեսումները:
Հնարավորինս կիրառել տեքստային և աղյուսակային ներկայացում:
Խոշորացված համայնքների դեպքում եկամուտներն ու ուղղակի ծախսերը ներկայացնել ըստ բնակավայրերի:
Ծավալի նկատմամբ սահմանափակում չկա, սակայն պետք է հիշել, որ համայնքի բյուջեն առանձին փաստաթուղթ է և կարիք չկա այն նույնությամբ ներառելու ՀԶԾ մեջ:

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներից միայն 2019թ. է նախատեսվում ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում, այն էլ փոքր գումարի չափով: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 48,2%, 2017թ.՝ 47,9%, 2018թ.՝ 49,0%, 2019թ.՝ 50,3%, 2020թ.՝ 49,9%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	**198244,2**	**117266,7**	**179144,6**	**168843,0**	**176005,6**	**178860,8**	**187090,6**
I.	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)***	**152760,9**	**108975,7**	**148420,9**	**153582,0**	**159505,6**	**160575,8**	**161810,6**
1	**ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**71355,4**	**46835,2**	**68230,0**	**69042,0**	**69865,6**	**70615,8**	**71391,6**
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**	**37674,3**	**23451,7**	**36500,0**	**36762,0**	**37015,6**	**37195,8**	**37391,6**
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	31126,1	19324,6	29500,0	29750,0	29960,0	30100,0	30290,0
	Հողի հարկ	6548,2	4127,1	7000,0	7012,5	7055,6	7095,8	7101,6
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**	**31213,6**	**21998,3**	**30000,0**	**30500,0**	**31000,0**	**31500,0**	**32000,0**
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	31213,6	21998,3	30000,0	30500,0	31000,0	31500,0	32000,0
1.3	**Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**2467,5**	**1385,2**	**1730,0**	**1780,0**	**1850,0**	**1920,0**	**2000,0**
	Տեղական տուրքեր	2467,2	1385,2	1730,0	1780,0	1850,0	1920,0	2000,0
1.4	**Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ**							
	Պետական տուրքեր							
1.5	**Այլ հարկային եկամուտներ**							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							

2	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**66989,7**	**53393,2**	**71190,9**	**75290,0**	**80190,0**	**80260,0**	**80519,0**
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**	**66989,7**	**53393,2**	**71190,9**	**75290,0**	**80190,0**	**80260,0**	**80519,0**
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	66989,7	53393,2	71190,9	**75290,0**	**80190,0**	**80260,0**	**80519,0**
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	**Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ***	**14415,8**	**8747,3**	**9000,0**	**9250,0**	**9450,0**	**9700,0**	**9900,0**
3.1	**Տոկոսներ**							
3.2	**Շահաբաժիններ**							
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**							

	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1272,0	970,2	1200,0	1200,0	1200,0	1200,0	1200,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	**Վարչական գանձումներ**	**12943,8**	**7577,1**	**7600,0**	**7850,0**	**8050,0**	**8300,0**	**8500,0**
	Տեղական վճարներ	**7496,5**	**5116,0**	**5600,0**	**5700,0**	**5750,0**	**5850,0**	**5900,0**
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	5447,3	2461,1	2000.0	2150,0	2300,0	2450,0	2600,0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող)							

	վճարներ							
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**	**200,0**	**200,0**	**200.0**	**200,0**	**200,0**	**200,0**	**200,0**
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	200,0	200,0	200.0	200,0	200,0	200,0	200,0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.9	**Այլ եկամուտներ***							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)**	**15552,0**	**427,1**	**0**	**0**	**0**	**0**	**0**
1	**Հիմնական միջոցների իրացումից մուտքեր**							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	**Պաշարների իրացումից մուտքեր**							
3	**Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր**							

4	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**							
	Հողի իրացումից մուտքեր	15552,0	427,1	0				
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)**	**29931,3**	**7863,9**	**30723,7**	**15261,0**	**16500,0**	**18285,0**	**25280,0**
Ա.	**ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)**	**29931,3**	**7863,9**	**30723,7**	**15261,0**	**16500,0**	**18285,0**	**25280,0**
1	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**							
1.1	**Արժեթղթեր**							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	**Վարկեր**							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	**Փոխատվություններ**							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**							
2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ							

	թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	**Փոխատվություններ**							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը**	**44620,0**	**74551,6**	**30723,7**	**15261,0**	**16500,0**	**14285,0**	**25280,0**
2.4	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս**							
2.5	**Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս**							
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում**	**74551,6**	**30723,7**					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	**ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**							
1	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**							
1.1	**Արժեթղթեր**							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	**Վարկեր**							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							

1.3	**Փոխատվություններ**							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ:

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	**2015թ. տարեմուտ**	**2017թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ %***	**2018թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ %***	**2019թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ %***	**2020թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ %***	**2021թ. կանխ.**	***2015թ փաստ.նկատ %***
Ընդամենը եկամուտներ	135715,9	**148420,9**	**97,2**	**153582,0**	**100,5**	**159505,6**	**104,4**	**160575,8**	**105,1**	**161810,6**	105,9
Հարկային եկամուտներ, որից	60120,0	68230,0	95,6	68042,0	95,3	69865,6	97,9	70615,8	99,0	71391,6	100,0
Հողիհարկ	6500,0	7000,0	106,9	7012,0	107,1	7055,6	107,7	7095,8	108,4	7101,6	108,5
Գույքահարկ	52000,0	59500,0	95,5	60250,0	96,6	60960,0	97,8	61600,0	98,8	62290,0	99,9
Տեղական տուրքեր	1620,0	1730,0	70,1	1780,0	72,1	1850,0	75,0	1920,0	77,8	2000,0	81,0
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	66995,9	**71190,9**	106,3	**75290,0**	**112,3**	**80190,0**	**119,7**	**80260,0**	119,8	80519,0	120,2
Այլ եկամուտներ	8600,0	9000,0	62,4	**9250,0**	**64,2**	**9450,0**	**65,5**	**9700,0**	67,3	9900,0	68,7
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տարեսկզբի ազատ մնացորդ	44620,3	30723,7	68,8	**15261,0**	**34,2**	**16500,0**	**37,0**	18285,0	41,0	25280,0	56,6
Ընդամենը	180336,2	**179144,6**	117,3	**168843,0**	**110,5**	**176005,6**	**115,2**	178860,8	117,1	187090,6	122,5
Ընդամենը ծախսեր	180336,2	**179144,6**	124,6	**168843,0**	**117,5**	**176005,6**	**122,4**	178860,8	124,4	**187090,6**	130,2
Ընթացիկ ծախսեր, այդթվում	135715,9	148420,9	115,8	153582,0	119,8	159505,6	124,4	160575,8	125,3	161810,6	126,3

Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանցենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	51240,9	53400,0	107,3	53400,0	107,3	54400,0	109,3	54400,0	109,3	55405,0	111,3
Ապրանքն. գնմանևծառ. վճ. ծախս	16450,0	23754,8	159,1	25754,8	172,5	26500,0	177,5	26800,0	179,5	26800,0	179,5
Սուբսիդիաներ	56255,0	56500,0	96,1	59327,2	100,9	62805,6	106,8	62805,6	106,8	62805,6	106,8
Դրամա-շնորհներ	800,0	500,0	166,6	500,0	60.0	800,0	266,7	800,0	266,7	800,0	266,7
Սոցիալականնպաստներ	3610,0	5300,0	127,1	5600,0	74,5	6000,0	143,9	6500,0	155,9	6500,0	155,9
Այլծախսեր	7360,0	8966,1	457,4	9000,0	459,2	9000,0	459,2	9270,2	468,2	9500,0	484,7
Ոչ ֆինանսական ակտիվների գծովծախսեր, այդ թվում	44620,3	30723,7	68,8	15261,0	34,2	16500,0	37,0	18285,0	40,9	25280,0	56,6
Հիմնական միջոցներ	44620,3	30723,7	68,8	15261,0	34,2	16500,0	37,0	18285,0	40,9	25280,0	56,6

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
3. Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը,
4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

✓ Համայնքը իր աշխարհագրական դիրքով մոտ է մայրաքաղաք Երևանին և շրջկենտրոն Աբովյան քաղաքին: Համայնքը տեղակայված է Երևան-Սևան մայրուղու հարևանությամբ և մշտական կապի մեջ է խոշոր քաղաքների հետ: Համայնքը մոտ 95% ով գազաֆիկացված է ունի ներքին հեռախոսակապ, ինչպես նաև մի զգալի մաս օգտվում է քաղաքային հեռախոսից: Բջջային ծածկույթը գերազանց է: Համայնքում հեռարձակվում են բոլոր մետրային և դեցիմետրային հեռուստաալիքները: Գրեթե ամբողջ համայնքը ապահովված է խմելու ջրով: Համայնքում կան պատմամշակութային մի քանի կոթողներ, որոնք կարող են նպաստել զբոսաշրջության զարգացմանը:

✓ համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ և փոխհամաձայնեցում,

✓ համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և ազգաբնակչության վստահություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- ✓ Ներհամայնքային երկրորդական ճանապարհների և նորակառույց թաղամասերի ճանապարհների անմխիթար վիճակը,
- ✓ Նորակառույց թաղամասերի կոյուղու գրեթե բացակայությունը,
- ✓ Սոցիալապես անապահով բնակչություն մոտ 35%,
- ✓ Խմելու ջրի և ոռոգման համակարգերի վերանորոգման և նորերը կառուցման անհրաժեշտությունը,
- ✓ Գործազրկության առկայություն, աշխատատեղերի սակավություն,
- ✓ Ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակ,
- ✓ Մարզկենտրոնից հեռու գտնվելը,
- ✓ Ոռոգման ջրի սղությունը և ցանցերի անմխիթար վիճակը,
- ✓ Որոշ փողոցներում խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման, նոր թաղամասում խմելու ջրագծերի կառուցման անհրաժեշտություն,
- ✓ Նոր թաղամասի գազաֆիկացման ծավալների ավելացման անհրաժեշտություն,
- ✓ Նոր թաղամասերում կոյուղու բացակայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորությունը ՝

- ✓ Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական աղետներ (երկրաշարժ, սողանք, կարկուտ և այլն),
- ✓ Ներկայումս համայնքին սպառնացող հիմնական վտանգը խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածություն,
- ✓ Գործազրկության մակարդակի աճը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Առինջի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները :

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	**20.3%**	**19%**	**18%**	**17%**	**16%**
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	**9,9%**	**9,8%**	**9,8%**	**9,9%**	**9,8%**
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	**1%**	**1.5%**	**1.7%**	**2%**	**2.5%**

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Նոր թաղամասերի ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում,
- ✓ Փողոցների բարեկարգում և ասֆալտապատում,
- ✓ Համայնքի ոռոգման ցանցի կառուցում,
- ✓ Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում,
- ✓ Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմում,
- ✓ Նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ:

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ					
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր	**20.3%**	**19%**	**18%**	**17%**	**16%**

թվին (արտահայտված տոկոսով)					
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	**9,9%**	**9,8%**	**9,8%**	**9,9%**	**9,8%**
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով					
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ					
1. Նոր թաղամասերի ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում					
2.Փողոցների բարեկարգում և ասֆալտապատում					
3.Համայնքի ոռոգման ցանցի կառուցում					
4.Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում					
5.**Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմում**					
6.Նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ					

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն1

« Նոր թաղամասերի ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել կոյուղու կառուցման աշխատանքների իրա-կանացման համար, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերականգնում						
Ծրագրի անմիջական նպատակ Համայնքում հին կոյուղագծերի վերանորոգում և համայնքի նոր կաուցվող թաղամասի համար կոյուղու կառուցում:	Կոյուղու խողովակաշարի երկարությունը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		7650	2500	1800	1500	850	800
Ծրագրի միջանկյալ արդյունքներ *Կեղտաջրերի արտաքին մակերես դուրս գալու հավանականության փոքրացում, կեղտաջրերի հեռացման աշխատանքների կրճատում՝ ֆինանսական միջոցների տնտեսում:*	1.Կոյուղու կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (գծմ)				
		2016	2017	2018	2019	2020	2021
		7650	4000	7000	7650		
	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	*1. Դիմում կոյուղին սպասարկող ընկերությանը* *2. Մրցույթի հայտարարում* *3. Պայմանագրի կնքում* *4. Աշխատանքների կատարում*						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 800000,0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 800000,0դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի Խ.Աբովյան,Պ. Սևակի,Դուրյան, "Ա" և Բ" թաղամասերում բացակայում է կոյուղագծերի համակարգը, որը առաջացնում է նշված թաղամասերում հակասանիտարական վիճակ, անհրաժեշտ է կանխել շրջակա միջավայրի աղտոտումը:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ղ

« Փողոցների բարեկարգում և ասֆալտապատում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել ճանապարհների կառուցման աշխատանք-ների իրականացման համար:

Ծրագրի անմիջական նպատակ

Ունենալ առավել բարեկեցիկ համայնք

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

Ունենալ բարեկեցիկ համայնք

1. Համայնքային ճանապարհների վերանորոգում և կառուցում (%, ոչ աճողական)

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0	40	45	50	60	70

2. Համայնք մտնող գլխավոր ճանապարհի վերանորոգում (%)

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0	100	0	0	20	0

Ծրագրի հիմնական գործողությունները	*1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում* *2. Համայնքի ներդրում* *3. Պայմանագրի կնքում* *4. Աշխատանքների կատարում*
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 350000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 350000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Առինջ համայնքի ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում, իսկ նոր կառուցվող թաղամասերի ճանապարհները գրունտային են և ասֆալտապատման խիստ կարիք ունեն և նախահաշիվային արժեքը կազմում է 950,0 դրամ:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ն

« Համայնքի ոռոգման ցանցի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել ոռոգման փակ ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքային արժեքի ավելացում

Ծրագրի անմիջական նպատակ

Բնակչությանը ոռոգման ջրով ապահովելը

Ոռոգվող հողատարածությունները

Ցուցան իշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ ***(հա)***				
	2016	2017	2018	2019	2020	2021
	50	60	80	120	150	200

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

Ոռոգման ջրի կորուստների կրճատում:

1. Համայնքի ոռոգման ցանցի կառուցում

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0	30	50	70	80	100

2. Ոռոգման ջրի կորուստներ

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
	2016	2017	2018	2019	2020	2021
		40	35	30	20	20

Ծրագրի հիմնական գործողությունները	*1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում* *2. Համայնքի ներդրում* *3. Պայմանագրի կնքում* *4. Աշխատանքների կատարում*
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 125000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 125000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում վերջին տարիների վերանորոգվել է 2000մ փակ համակարգի ոռոգման ցանցը, սակայն նոր կառուցվող Վ. Տերյան թաղամասում բացակայում է ոռոգման համակարգը, նոր ոռոգման համակարգ կառուցելուց հետո կորուստները կհասնեն նվազագույնին;

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ 4

« Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td><u>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</u></td><td colspan="6">միջոցներ հայթհայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքային միջոցների գույքի ավելացում:</td></tr>
<tr><td rowspan="3"><u>Ծրագրի անմիջական նպատակ</u>

Ունենալ արտաքին լուսավորությունով ապահովված, անվտանգ և մաքուր փողոցներ</td><td rowspan="3">Ցուցան իշներ</td><td>Ելակետ ային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>20</td><td>25</td><td>30</td><td>35</td><td>40</td></tr>
<tr><td rowspan="9"><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u>

Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությանը 60%:</td><td colspan="6">1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցա նիշնե ր</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (մարդ)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>400</td><td>520</td><td>600</td><td>760</td><td>820</td></tr>
<tr><td colspan="6"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցա նիշնե ր</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ (%)</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td><u>Ծրագրի հիմնական գործողությունները</u></td><td colspan="6">2. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում
3. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում
4. Մրցույթի հայտարարություն
5. Պայմանագրի կնքում
6. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ
Կապիտալ ծախսեր՝150000.0 հազար դրամ
Ընդհանուր բյուջեն՝150000.0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորու-թյան աշխատանքների իրականացման ավարտ:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո 5

« Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել գլխավոր հատակագծի ձեռք բերման աշխատանքների իրականացման համար:
Ծրագրի անմիջական նպատակ *Համայնքի քաղաքաշինության բնագավառի և համայնքի տարածական զարգացման ապահովում*	

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (բաժիններ)				
	2016	2017	2018	2019	2020	2021
		5000	0	0	0	0

Ծրագրի միջանկյալ արդյունքներ Առավել արդյունավետ աշխատանքների կատարում քաղաքաշինության բնագավառում:	

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
		5000	0	0	0	0

1.

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
		5000	0	0	0	0

Ծրագրի հիմնական գործողությունները	1. *Աշխատանքների կատարման ավարտ*
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2017թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի հետագա տարածական զարգացման, քաղաքաշինության պլանավորման, հողերի արդյունավետ օգտագործման ապահովում, կառուցապատման ճիշտ պլանավորում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 6

« Նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	միջոցներ հայթհայթել նոր տիպային մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ:
Ծրագրի անմիջական նպատակ Հնարավորինս շատ երեխաների համար ստեղծել պայմաններ ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման , առողջ կրթված սերունդ ունենալու համար	

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
		295000,0				

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

համայնքում մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում

1. Նոր տիպային մանկապարտեզի կառուցման ավարտ

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0					

***2.** Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը*

Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
	2016	2017	2018	2019	2020	2021
	0	0	0	30	80	150

Ծրագրի հիմնական գործողությունները	*1. Աշխատանքների կատարման ավարտ*
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ .0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 295000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 295000.0 հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2017թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի գործող Ռ. Ծառուկյանի անվամբ մանկապարտեզը հին կառույց էր և չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, մանկապարտեզը երկխմբային էր և հաճախում էին միայն գյուղի սակավ ապահովված ընտանիքների թվով 60 երեխաներ: 2016թ.փետրվար ամսից բարերար Գագիկ Ծառուկյանի մասնավոր ներդրումների միջոցով կառուցվում է նոր տիպային մանկապարտեզ, որի կառուցման աշխատանքները ընթացքի մեջ են և այն ավարտին կհասցվի 2017թ. սեպտեմբեր ամսին:Մանկապարտեզը նախատեսված է 300-350 երեխաների համար:

4. ՀԶԾ -Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը: Առինջ համայնքի ՀԶԾ - ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Առինջ համայնք)
(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջետա-վորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ						Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնակցություն համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն արդեն է	Ֆինանսավորմամբ ընթացքում գտնվող ծրագրեր	Ներկայացվել է ֆինանսավորման համար	Ֆինանսավորման համար ներկայացվելիք չէ
1. Նոր թաղամասերի ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում																		
2. Փողոցների բարեկարգում և ասֆալտապատու																		

մ																		
3. Համայնքի ոռոգման ցանցի կառուցում																		
4. Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում																		
5. Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմում																		
6. Նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ																		

5. ՀԶԾ -Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ -ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 8-*ում* ներկայացված է ՀԶԾ -ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔ
(2016-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Կիրառվող մեթոդներ		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																		Տարեկան	կիսամյակային արդյունքներ		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																					

1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)																	X	Մարզպետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով																	X	<< Ոստիկանություն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																			
1. Նոր թաղամասերի ջրահեռացման (կոյուղու) համակարգի																		Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
2. Փողոցների բարեկարգում և ասֆալտապատում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

3. Համայնքի ոռոգման ցանցի կառուցում																		Համայնքա-պետարան	
4.Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
5. Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի ձեռքբերում																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
6.Նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ավարտ																	X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ -ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ -ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ -ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ -ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ -ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն ՝ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ -ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ -ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ -ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ -ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ -ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ -ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: